ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆՆԱ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԵՐԸ Կ.ԶԱՐՅԱՆԻ «ԲԱՆԿՕՕՊԸ ԵՒ ՄԱՄՈՒԹԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ» ՎԵՊՈՒՄ

Յուրաքանչյուր հասարակություն ստեղծում է տվյալ ժամանակաշրջանի իր իդեալը: Խորհրդայնացող Հայաստանում նույնպես նոր ստեղծվող հասարակարգի գաղափարախոսության կայացմանը զուգահեռ ձևավորվում էին նոր իդեալներ: «Բանկօօպը եւ մամութի ոսկորները» վեպում Կոստան Զարյանի նպատակն է ցույց տալ, թե ինչպիսին է մարդը Խորհրդային Հայաստանի նոր հասարակարգում, ինչ է բերել նոր Հայաստանը մարդկանց՝ ինչ գաղափարներ, նոր կյանքի ինչպիսի պատկերացումներ, նոր մարդու ինչպիսի բնութագիր: Կերտելով բազմապիսի կերպարներ՝ գրողը մանավանդ կարևորում է իդեալ-կերպարները, որոնք նոր հասարակության ծնունդն էին:

Ծարքային քաղաքացի ընկեր Աղասին «մարքսիստական անաչառ քննադատ» է, «լուսվարի պաշտօնեայ» և «փեշակով պրոլետ բանաստեղծ»: Հենց ամենասկզբից, համադրելով «փեշակ» և «բանաստեղծ» բառերը, հեղինակը արհամարհանքով է նկարում Աղասու կերպարը: Միգուցե ընկեր Աղասին կարողանում է խոսքը հանգավորել, բայց միտքը չի աշխատում, և գլխից որևէ արժեքավոր տող դուրս չի գալիս: Այս մարդու միակ արժանիքն այն է, որ հասկացել է, թե ինչպիսին պետք է լինի նոր հասարակության քաղաքացին, հրաշալի գիտի, թե ինչի համար է անցել կուսակցության շարքերը: Շատ ավելի լավ յուրացրել է, թե ինչ արտոնություններ ունի կուսակցականը: Կուսակցության գաղափարախոսության մասին մի քանի տող անգիր արած՝ մեծ-մեծ ճամարտակում է՝ թարմ ականջ գտնելով: Նրա երազանքն է կուսակցական առաջնորդ ընկեր Հերուշի ուշադրությանն արժանանալ:

Շատ են աղասիները, որոնք խաղաղ գոյատևելու երազանքը փնտրում են նոր գաղափարախոսության շվաքում՝ նահանջելով սկզբունքներից: Այդպիսի մարդկանց համար խորթ են հայրենիք, ժողովուրդ, ժողովրդի ապագա ու երազանք հասկացությունները: «Մանավանդ աշխատիր ավելի մոռանալ քան սովորել: Փոքր-բուրժուական

դաստիարակութիւնը, ազգասիրական թոյնը, ծոռոմ հայրենասիրութիւնը, կրոնական ցնդաբանութիւնները, եւ ամբողջ էդ բաները առհասարակ, ուղեղդ կեղտոտել են, միտքդ վարագուրել եւ լեցրել են միանգամայն վնասակար հաշիշով: Ազատագրուի՛ր»[1],- սրանք Աղասու խոսքերն են: Աղասիներ միշտ էլ եղել են ու կլինեն բոլոր ժամանակներում, բոլոր հասարակություններում, բայց այս նոր հասարակությունը և գաղափարախոսությունը ոչ միայն ծնում, այլև նպաստում են աղասիների բազմացմանը:

Եղեռնի ու որբության սարսափները ապրած պատանի է Հայկը, որը հանգրվան է գտել Սարդարապատի անապատի ծայրին կառուցված Որբերի գյուղում: Ուրիշ որբեր էլ են ապրում այդ գյուղում, և նրանցից յուրաքանչյուրն ունի իր մեծ կամ փոքր երազանքը, ու այդ երազանքները նման են իրար՝ ունենալ տուն, ընտանիք, ապրուստը վաստակելու հնարավորություն. «Պիտի ամուսնանան, անապատին այս ծայրը պիտի լեցնեն աղմկող բնակչութիւնով, լեցուն կրծքերով կիներով, չարաճճի, քիթերը կեղտոտ երեխաներով եւ դրան առջեւ պոչերը շարժելով բառաչող տաւարով»[2]: Բայց Հայկը այլ է: Նա ցավ է զգում, որ ոչ ոք իրեն չի հասկանում, զարմանում է իր բախտակից ընկերների նյութական երազանքների վրա, չնայած իր ուզածն էլ իր համար հստակ չէ դեռևս: Մի բան հաստատ գիտի, որ ինքը չի ցանկանում ուրիշի պարտադրած երազանքով ապրել և ընդհանուր երազանքի ակամա մասնակիցը լինել: Հենց այդ պատճառով էլ Հայկը փողոցը գերադասում է Որբերի գյուղից, գերադասում է սեփական երազանքներն իրականացնելու դժվար, անորոշ ճանապարհը լույսի շող չունեցող, ճահճային, պարտադրված վիճակից: Տենդի մեջ տանջվելիս Հայկին անընդհատ այցելում են անցյալի ծանր հուշերը: Նա որոշում է կամքի ուժով փակել այդ հիշողությունների ճանապարհը, որպեսզի կարողանա մտածել ապագայի մասին: Բայց տեսնում է, որ ապագան նույնքան ցավալի է, որքան անցյալի հուշերը: «Իսկ ի՞նչ է նոր այդ կեանքը, ասում է մի ուրիշ ձայն, ինչո՞վ է այսօրը երեկուանից լաւ – մալարիա՞ն, Որբերի գիւ՞ղը, պահածոյ մսի կտորնե՞րը, այս սենեա՞կը, այս անտանելի քամի՞ն, այս անորո՞շը... Եւ երեւակայութիւնը նորից վերադառնում է իր քաոսը»[3]: Հայկին ցավ էր պատճառում այն, որ, ճիշտ է, որբերին ապաստան էին տվել, հաց՝ սովամահ չլինելու համար, բայց ոչ ոք չէր մտածել նայել այդ երեխաների հոգուց ներս և տեսնել, թե ինչ է կատարվում այնտեղ: Միգուցե նրանց այցելում էին

---

1 Կ.Զարյան, «Բանկօօպը եւ մամութի ոսկորները», Անթիլիաս, 1987, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, էջ 235

2 Ն.տ., էջ 45:

3 Ն.տ., էջ 30:

հարցեր, որոնց պատասխանը նույնքան անհրաժեշտ էր, որքան այն հացը, որ տրվում էր սովից փրկելու համար: Համենայն դեպս Հայկին հուզում էին հարցեր, որոնք ուրիշների համար գոյություն չունեին: Պատանին իրեն օտար էր զգում: «Ուրիշների համար գոյութիւն ունէին մանաւանդ նիւթական այն հարցերը, որոնք բխում էին անմիջական պահանջներից: Երբեք ոչ մի տեղ, ոչ մի երկրում, պատուհանին դրուելիք մի կտոր ապակին, կօշիկը նորոգելու մի կտոր կաշին, տասը հատ կոճակը, մի ասեղը այն գերագոյն նշանակութիւնը չէին ստացած, ինչպէս այստեղ: Ու մարդն էլ չափւում է իր մկանունքների ուժի աստիճանով»[1]: Հայկի փնտրածը դա չէր: Նա ցանկանում էր ճանաչել իրեն, հնարավորություն ունենալ զարգանալու և կայանալու որպես անհատականություն և բոլորովին չէր ցանկանում, որ դա կատարվեր Որբերի գյուղի ճահճային միջավայրում: Հոգու սլացքը Հայկին հեռու էր տանում: Նրան խանգարում էր ուրիշի կողմից պարտադրված չարը կամ բարին. նա ինքն էր ուզում հասու լինել այդ ամենին: «Նրա ոտքերը քայլել էին չափազանց փոթորկալից դաշտերից, նրա աչքերը սնանել էին չափազանց մեծ յոյզերով, եւ նրա մարմինը ամբարեր էր բարդ ապրումների չափազանց մեծ քանակութիւններ, որպէսզի նա խելօք եւ տնայնացած կենդանու նման կարողանայ տանել ստրկական մտքի եւ ձանձրալի լինելիութեան այդ լուծը»[2]: Հայկը հեռանում է Որբերի գյուղից:

Մինչև ընկեր Աղասու հետ ճակատագրական հանդիպումը Հայկը դժվար փորձությունների միջով է անցնում: Փորձություններից մեկն էլ որբերի կոմունայի անդամ դառնալն ու խուժանների հետ ապրած կյանքն էր: Մի պահ Հայկին թվում է, թե երջանիկ է, քանի որ ազատ էր, անում էր այն, ինչ իրեն դուր էր գալիս, կարողանում էր փող վաստակել, հարգված էր կոմունայի անդամների կողմից, և կար Սրբիկը՝ իր նման որբ, բայց որը լրացնում էր սիրո պակասը, որը Հայկը զգում էր մորը կորցնելու օրից: Սակայն ընկեր Աղասու հետ փոխանակած մի քանի նախադասությունը խառնում են նրա մտքերը: Եվ երբ մի օր ծխախոտի շրջիկ վաճառող Հայկին փողոցներից մեկում անտեղի դաժանորեն ծեծում են, մինչև հոգու խորքը վիրավորված՝ կրկին սկսում է մտածել իր ապագայի մասին: Մղձավանջային թմբիրի մեջ ընկած Հայկը »... սկսում է երազել մի այնպիսի երկրի մասին, ուր մարդիկ ու կանայք գեղեցիկ են, ուր արդարութիւն է տիրում, ուր կտոր հացի համար կռիւ չկայ, ուր թշուառութիւն, կեղտոտութիւն եւ հիվանդութիւն չկայ...»[3]: Հիշենք այս պահը: Հայկը իր ճակատագիրը չի առանձնացնում երկրի ու ժողովրդի ճակա-

---

[1] Ն.տ., էջ 46:
[2] Ն.տ., էջ 36:
[3] Ն.տ., էջ 141:

տագրից. նա իրեն ամբողջի անբաժանելի մասն է զգում և հասկանում է, որ ընդհանուրի բարօրությունը նաև իր բարօրությունն է:

Հայկը չի դադարում մտածել իր լինելության խորհրդի մասին, և կինոժապավենի նման նրան պատկերանում են անցած կյանքի ստորացնող պատառիկները: «Վերջը վերջով, դու ինքդ էլ չգիտես, թէ դու ո՞վ ես, ո՞ւրկից ես գալիս եւ ո՞ւր ես գնում... Դու ո՞վ ես»[1]: Որպես այս հարցերի պատասխան՝ հնչում է ընկեր Աղասու գրավիչ առաջարկը. եթե Հայկը գիտակցի դասակարգային շահերը, եթե կանգնի մարտական պրոլետարիատի շարքերում, անմիջապես կբարելավի վիճակը, դիրքի կհասնի, ռոճիկ կստանա, լավ ճաշարաններում կսնվի և, ամենակարևորը, Աբովյան փողոցում վերուվար կանի... ու բոլորը նրան կնախանձեն: Հայկը միանգամից և հեշտությամբ չի ընդունում որոշումը. ներքին պայքար է տեղի ունենում, քանի որ խելացի մարդ էր, և քաղաքում ապրելու ընթացքում, թեկուզ խուժանների հետ, հասցրել էր հասկանալ, թե ովքեր են բոլշևիկները, նրանց գեղեցիկ խոսքերը ինչ սև ու գորշ իրականություն են թաքցնում: «Ո՞ւր գնալ ... խեղճ Հայկ, բոլոր ճամբաները փակուել են»[2]: Դժվարին պայքարին հաջորդում է նույնքան դժվար որոշումը. «Եւ վերջապէս, չեմ հասկանում, ինչո՞ւ պիտի լռեմ ... Ինչո՞ւ... Ի՞նչ ա, ես մարդ չե՞մ... ես ուրիշների նման մսից ու արիւնից չե՞մ, սրտիս մէջ զգացում չունե՞մ... ուրիշներից ինչո՞վ եմ պակաս»[3]: Հայկը կայացնում է իր դատավճիռը:

Հետո սկսվում է մի շատ հետաքրքիր պատմություն, թե ինչպես է Հայկը կամաց-կամաց հրաժարվում իր ինքնությունից: Կ.Զարյանը կարողացել է բոլշևիկյան գաղափարախոսության իմաստը ներկայացնել և Հայկի կերպարի միջոցով ամբողջացնել բոլշևիկի կերպը, էությունը, նպատակը: Հեղինակը մեզ բերում է հետևյալ եզրակացության՝ բոլշևիկները չեն կարող համամարդկային լինել և հումանիզմի կրողը դառնալ: Նրանք ոտնահարում են մարդու համար ամենանվիրականը՝ ազգ, հայրենիք, կրոն: Ըստ այս տրամաբանության՝ հաջորդ անպետքությունը, որ պիտի դեն նետվի, կլինի մայրենին: Մենք ռոբոտացման գործընթացի ականատեսն ենք դառնում: Կուսակցության նվիրական նպատակը բացահայտ է՝ ստեղծել ռոբոտների հասարակություն, որտեղ չեն լինի մտածող, զգացող, նվիրվող անհատներ: Կլինեն զրոներ:

Կարելի է ենթադրել, որ ինչքան էլ մի փոր հաց ունենալը գերխնդիր էր դարձել Հայկի համար, նա՝ կրթված, զարգացած, մտածող ու տրա-

---

1 Ն.տ., էջ 203:
2 Ն.տ., էջ 207:
3 Ն.տ., էջ 207-208:

մաբանող այդ ըմբոստ հոգին, պիտի ընդվզեր: Բայց ոչ, «Հայկի լարված միտքը տառապեց թեթև ջերմով»[1]: Ընդամենը: Նրա ներսում ինչ-որ բան է հեղաշրջվում, բայց դա անհրաժեշտ էր, որպեսզի Հայկը կարողանար կյանքին այլ կերպ նայել և կատարվածը այլ կերպ ընկալել: Հայկի միտքն ու հոգին պայքարում են. միտքն ընկալում է ժամանակի պահանջը, և Հայկը, մաքրելով ուղեղը հին, «անպետք» մտքերից, տեղ է բացում նոր գաղափարների համար: Միայն մի խնդիր կար, որը նա չէր կարողանում հեշտությամբ լուծել: Նրա երակներով հոսող ցեղի հիշողությունը անողոք պայքարում էր մտքի դեմ և չարչարում Հայկին, թույլ չէր տալիս նրան վերածվել նոր մարդու՝ ցեղային պատկանելությունից, ցեղի զգացողությունից մաքրված. Կարծում ենք, որ այս հերոսին հեղինակը պատահական չի անվանել Հայկ: Հայկը մեր ժողովրդի խորհրդանիշն է, և գրողը տագնապում է. մի՞թե Հայկը իրոք ժողովրդի ապագա վերափոխումն է ներկայացնում, արդյոք բոլշևիկյան գաղափարախոսությունը մեր ժողովրդին պիտի նոր հայկերի հասարակությա՞ն վերածի: »...Դու ո՞վ ես, ո՞ւրկից ես գալիս եւ ո՞ւր ես գնում... Դու ո՞վ ես» հարցերը ուղղված են նաև ժողովրդին:

Ի վերջո Հայկը կարողանում է հաղթել ինքը իրեն. «Էդ հայութիւն ասուածը ի՜նչ սոսկալի բան է եղել: Ծանր մի բեռ, ուսերիդ վրայ դրուած հսկայ մի քար: Ձեռքերդ ու ոտքերդ կաշկանդուած են, հազար տեսակ ուրուականներ ցցում են առջեւդ, անտեսանելի ձեռքերով նշաններ անում, մտնում սրտիդ մէջ, քերում, քերում...»[2]: Իսկապես, հայ լինելը ծանր բեռ է:

Չարյանն այս մտքին անդրադառնում է իր տարբեր ստեղծագործություններում: Ամեն մեկը չի կարող հպարտորեն և միաժամանակ խոնարհությամբ տանել հայ լինելու խաչը: Հայկը այդ տեսակից է և դրա համար պատրաստ է (կամ պարտադրված է) հրաժարվել իրեն այցելող սիրելի ուրվականներից: «Սատանան տանի ուրուականներին...»[3]: Խորհրդանշական է նրա ֆուրաժկան. այն մի քիչ սեղմում- ցավեցնում է գլուխը, բայց դրա փոխարեն ազատագրում է խանգարող զգացմունքներից ու հիշողություններից: «Ներողութիւն, դու Հայկը չէ՞ս»,- հարցնում է նրան ներքին ձայնը շատ թույլ, նվաղուն ձայնով: «Ե՞ս, էն Հայկը, - չեմ ճանաչում: Ես նոր եմ ծնուել, ես, էդպէս ասած, անյայտ եւ հեռաւոր մի մոլորակից նոր եմ վայր ընկել»,- հաստատուն ձայնով պատասխանում է նոր Հայկը: Մարքսիզմի մտքի դանակի տակ պատառ-պատառ է արվում հոգևոր Հայկ-մարդը, «մնում է սրացած այն կոպեկը, տնտեսական այն

---

[1] Ն.տ., էջ 235:
[2] Ն.տ., էջ 136:
[3] Ն.տ., էջ 236:

ազդակը, որ պատճառավորում է երեւոյթները»[1]: Ահա այսպես Հայկը վերաձևվում, վերափոխվում, վերածնվում է: Նոր Հայկի առաջին փորձությանը ականատես ենք լինում Սրբիկի հետ հանդիպմանը: Սրբիկը, հիշելով Հայկի քնքուշ խոսքերը՝ «Կը տեսնե՛ս, կը տեսնե՛ս, Սրբիկ ջան, քեզ համար ինչեր պիտի անեմ»[2], օգնության ակնկալիքով գնում է Հայկի մոտ: Իհարկե, Հայկը նրան վախով ու տհաճությամբ վանում է. «Աչքիս չերևաս... Ուզում ես տո՞ւնս քանդես, ինչ ա, ուզում ես տո՞ւնս քանդես...»[3]: Գյուտ վարդապետի հետ հանդիպումը Հայկի համար ավելի քիչ էր ցավոտ: Վարդապետը զարմանում է, որ Հայկը առանց բարևելու անցնում է: Երիտասարդը տեսել էր վարդապետին, բայց ընկեր Աղասու դասերը լավ էր յուրացրել ու հավատ, կրոնական զգացումներ, մարդկային պարզ ջերմություն, երախտագիտություն... մաքրել դեն էր նետել. նոր Հայկի համար դրանք ավելորդություններ էին: Թեև ներքին ձայնը նրան անընդհատ հիշեցնում էր, որ այն, ինչ անում է, ճիշտ չէ, բայց Հայկն արդարանում է ինքն իր առջև. ինքը պարզապես կատարող է, գործիք, իսկ գործիքը չի մտածում: Չնայած այդ արդարացումը նրա հոգուն խաղաղություն չի բերում. նա նիհարել էր, վատ էր քնում, դարձել էր ջղային:

Որպես մարդկային հոգու գիտակ՝ Կոստան Զարյանը Հայկի մեջ կատարվող յուրաքանչյուր փոփոխություն պատճառաբանում, հիմնավորում է, և մենք տեսնում ենք, թե որքան դժվար է հերոսին տրվում այդ փոփոխությունը: «Ու Հայկը կամաց-կամաց, շնորհիւ տարած աշխատանքին եւ կրած պատասխանատուութիւններին, փոխուել էր ֆիզիքապէս եւ բարոյապէս: Լրջացել էր, արտայայտւում էր քիչ բառերով, կտրուկ եւ սառը, նախադասութիւնների մէջ վճռական շեշտ դնելով եւ որոշ անտարբերութիւն: Ամբողջովին աչք էր – մեծ, զննող, հասկացող, սպառնացող»[4]: Երբ Հայկը, Որբերի գյուղից փախչելով, քաղաք մտավ, տեսավ բանկոոպի ամենատես աչքով պաստառը: Երկար ժամանակ նա չէր կարողանում ազատվել այդ սարսափելի աչքի հետապնդումից. այժմ ինքն էր դարձել ամենատես աչք: Աշխատանքի բերումով գյուղ այցելած Հայկին գյուղացիները բողոքում են, թե՝ «Հացի պաշարը վերջացել ա... խոխեքը մնացել են առանց հացի»: Նա բարկացած պատասխանում է. «Դէ, երբ ձմեռը գայ, թաքցրած ցորէնը կը հանէք եւ կուտէք: Աւելորդ է աղքատ ձեւանալ, մեր աչքերը ամէն բան տեսնում են եւ լաւ ենք իմանում ինչ ունէք չունէք...»[5]:

---

1 Ն.տ., էջ 237:
2 Ն.տ, էջ 312:
3 Ն.տ., 312:
4 Ն.տ., 343:
5 Ն.տ., 576:

Հայկն արդեն ղեկավար պաշտոնյա է. հետևում է տնտեսության զարգացմանն ուղղված կուսակցական պլանին. նոր Հայաստան են կառուցում: Մեքենայով է շրջում: «Հբօսնողներից շատերը, որ ճանաչում էին Հայկին, նայում էին նրա վրայ յարգանքով, վախով եւ մի տեսակ հիացմունքով: Բարձրահասակ գեղեցիկ տղամարդ էր այլեւս, լուրջ, աշխատասէր, բանիմաց: Մեծ ապագայ էր խոստանում»[1]: Այն Հայկը, որը սեփական ուժերով էր ցանկանում ճանաչել աշխարհի չարն ու բարին, որը չէր հաշտվում ուրիշի պարտադրած երազանքի կատարողը լինելու մտքի հետ, այժմ դարձել էր ընդամենը պտուտակ, գործիք, թեկուզև դա ապահովում էր ոմանց հարգանքը, ոմանց հիացումը և ուրիշների վախը իր անձի նկատմամբ: Հայկը պետք է արդարանար իր ներքին ես-ի առաջ, այդ պատճառով էլ հորինել էր սեփական կարևորության, կարևոր ու մեծ գործ անելու առասպելը, այլապես չէր կարողանա ապրել: Միգուցե գիտակցում էր, որ ինքնախաբեությամբ է տարված, բայց թույլ չէր տալիս, որ ոչ պետքական մտքերը սողոսկեին իր ուղեղ.«Ճշմարտութիւնը այն է, որ էնքան տարւում ես իրերով, հոգով, մեքենայով, շինարարական աշխատանքով, որ մոռանում ես մարդ ասուած արարածը: Մի տոպրակ ցեմենտ աւելի թանգ է քեզ համար քան մի որեւէ Մարտիրոս կամ Մարկոս: Մարդ ասուած արարածը ծնուել է մի բան արտադրելու համար, եթէ չի արտադրում, նոյնիսկ վնասում է գործին, կոկորդից բռնիր եւ դեն շպրտիր: Եթէ բան չի շինում, ինչի՞ է պէտք: Դա է, որ շատերը չեն հասկանում»[2]: Հայկի այս խոսքերը բացում են տգեղ ճշմարտությունը բանվորագյուղացիական նոր երկիր կառուցողների էության վերաբերյալ. կառուցվում է նոր երկիր մարդկանց համար, բայց մարդը այդտեղ ընդամենը իր է ու միջոց:

Որպես խելացի մարդ՝ Հայկը գիտակցում էր, որ ինքը պետքական է այնքան ժամանակ, քանի դեռ ունակ է աշխատելու, քանի դեռ կարող են իրեն օգտագործել: Իսկ հետո՞... Հայկն աշխատում էր առանց իրեն խնայելու: Ինչքան ավելի էր ճնշում իր ներքին ձայնը, արդարության և ճշմարտության նկատմամբ իր զգացումները, այնքան ավելի խստասիրտ էր դառնում և ավելի գնահատված ու կարևոր աշխատակից: Հայկի վերափոխման հետ միաժամանակ փոխվում է նրա վերաբերմունքը սեփական անձի կարևորության նկատմամբ. նա սովորում է իրեն չզրկել, ավելին, լավագույնը իրենը դարձնել: Եվ սա այն Հայկն է, որը զարմանում էր բախտակից ընկերների նյութական երազանքների վրա: Հայկը կուսակցական հանձնարարությամբ հիվանդանոց է գնում՝ Մաշա Այդին-

---

[1] Ն.տ., 582:
[2] Ն.տ., 579:

յանին՝ նախկին հարուստի աղջկան այցելելու: Մաշան այնքան նուրբ ու գեղեցիկ է, խնամված, կրթված: Սրբիկի հետ համեմատելու որևէ եզր հնարավոր չէ գտնել, չնայած Հայկը իր հիշողությունից վաղուց մաքրել դեն էր նետել և՛ Սրբիկին, և՛ այն, որ Սրբիկը իր զավակին էր ծնելու: Այժմ Հայկին այլ հարց է հետաքրքրում. ինչպե՞ս պիտի վարվի Մաշայի նկատմամբ իր զգացմունքի հետ. չէ՞ որ նա նախկին թշնամու դուստր է:«Թողնենք թշնամու մտայնութիւնը, թողնենք նրա վնասելու կարողութիւնը: Վերջ ի վերջոյ, ամէն բան վերջացած է, նրանք պրոլետարիատի ոտքի տակ են, փոշիացած, ոչնչացած: Գաղափարից դուրս կայ ուղղակի ֆիզիոլոգիական զգացումը, որը անկարելի է յաղթահարել»[1]: Կրկին տեսնում ենք, որ Հայկը դադարել է սկզբունքային լինել: Գործում է երկար մտածելուց, ծանրութեթև անելուց, իր շահի գերակայությունը ստուգելուց հետո, իսկ ներքին ձայնը լռեցնել կամ համոզել Հայկը շատ լավ էր սովորել: Ինքն էլ գիտակցում էր դա. «Սոցիալիստական իրաւակարգի մեծութիւնը հենց դրանում է, ամէնքի առջեւ ճամբան բաց է, ով որ կարող է թող գայ, թող աշխատի եւ ընկերութեան սանդուխներից վեր բարձրանայ: Անշուշտ շատ զիջումներ պէտք է անել... Շատ եւ շատ զիջումներ: Էնքան էլ դիւրին չէ, չէ, դիւրին չէ... Կեանքը կեանք է, պէտք է շատ բան կոխկռտել, շատ դիակների վրայից անցնել՝ նպատակին հասնելու համար: Կեանքը պայքար է, անողոք կռիւ»[2]: Եվ տեղին է հարցնել, թե Հայկը արդյոք կարողացա՞վ գոնե մի քիչ մոտենալ իր երազանքին՝ այնպիսի երկրի կառուցմանը, «ուր մարդիկ ու կանայք գեղեցիկ են, ուր արդարություն է տիրում»: Ցավով տեսնում ենք, որ ոչ: Ավելի ցավալի է այն, որ տիրող գաղափարախոսությունն է հայկերի մեջ սպանում այդպիսի երազանքները:

Ճանաչելով ժամանակաշրջանը, ուսումնասիրելով Հայկի կերպարը՝ տեսնում ենք, որ ունենք ավարտուն կերպար, թեև վեպը ավարտված չէ: Կոստան Զարյանի նպատակն է Հայկի պատմությամբ ցույց տալ, թե ինչպես են ժամանակաշրջանը և տիրող գաղափարախոսությունը կերտում այն անհատին, թեկուզ այդ անհատի ողբերգության հաշվին, որը պետք է հասարակությանը:

Ա.Ավագյանը, մեկնաբանելով Հայկի կերպարը, նրա վերափոխության հիմնական պատճառը սոցիալականն է համարում: «Զարյանը հոգեբանական համոզիչ գույներով է ցույց տալիս, որ տնտեսական աղքատությունը հանգեցնում է հոգեկան ու գաղափարական սնանկության: Հայկը յուրովի զոհ է դառնում այդ իրականությանը, կորցնում իր մարդկային էությունը: Նրա արարքները հարկադրական են, անգամ հու-

[1] Ն.տ., 365:
[2] Ն.տ., 639:

սահատական ճիգի հետևանք՝ փրկվելու համար որբությունից, ծեծից, քաղցից, նաև արհամարհված լինելու նվաստացումից: Այդ անելու համար անհրաժեշտ է ընդամենը մի քայլ՝ սրտի վրայից քերել բոլոր ազնիվ երազանքները»[1]:

Կցանկանայինք համեմատության եզրեր տանել Կ.Զարյանի մի այլ հերոսի՝ Զվարթի[2] հետ: Ի տարբերություն Հայկի՝ Զվարթը մեծացել ու ապրում էր իրեն սիրող, քիչ թե շատ ապահովված ընտանիքում: Նա հարգված էր, սիրված, խնամքի կարոտ չէր, իսկ Արա Հերյանի սերն էլ ամբողջացնում էր Զվարթին՝ որպես կնոջ: Հարց է առաջանում, թե Զվարթին ինչը ստիպեց հայտնվել բոլշևիկյան մսաղացում՝ դառնալով չոր, անդեմ, կանացի հմայքից զուրկ մեկը: Կարելի է Հայկի կամ Զվարթի կերպարը համեմատել կամ հակադրել թեկուզ Հայկի բախտակիցների հետ՝ Որբերի գյուղից: Պարզ է, որ այստեղ մեղավորը ոչ այնքան աղքատությունը, թշվառությունը կամ սովն էին, այլ՝ գաղափարախոսությունը, որը, նվաճելով մարդկանց միտքը, շեշտը դնելով ստամոքսի վրա, դատարկում էր նրանց սիրտն ու հոգին:

Աղասիների և հայկերի կողքին գոյատևում են ավելորդ մարդիկ: «Բանկօօպը եւ մամութի ոսկորները» վեպում գրողը կերտել է «ավելորդ» մարդկանց կերպարներ՝ լեզվաբան, պատմաբան, պրոֆեսոր, ճարտարագետ, որոնք հիշեցնում են Հակոբ Պարոնյանի մուրացկաններին: Բայց եթե «Մեծապատիվ մուրացկաններում» ծաղրի շղարշը հետ քաշելով ենք հասկանում Մուրացկանների ցավը, ապա այս վեպում Կ. Զարյանը թվացյալ անտարբերությամբ է ներկայացնում «անպետք» մարդկանց ողբերգությունը: Ժամանակին նրանք կարողացել են սեփական աշխատանքով ապահովել իրենց արժանավայել կյանքը, իսկ որ ավելի կարևոր է, բոլորն էլ հարգված ու պահանջված են եղել: Ի վերջո մարդու համար անչափ կարևոր է պետքական լինելու համոզումը. հանուն իր կարևորությունը ապացուցելու՝ մարդն ընդունակ է և՛ սխրագործության, և՛ չարագործության: Ավելորդ դարձած այս մարդիկ կորցրել են մի շատ կարևոր բան ևս՝ հանունը: Եթե չկա հանունը, կյանքն անիմաստ ու իզուր է դառնում: Կորցնելով լինելության խորհուրդը՝ նրանք նույնիսկ հույս չունեին, թե ապագայում որևէ բան կփոխվի: Նրանց մնում է ապրել հիշողություններով, իսկ գիշերները տառապանքից չքնել: Պարոնյանի Մուրացկանները պայքարում են թեկուզև պնդերեսությամբ, մուրացկանությամբ: Կոստան Զարյանի Ավելորդները համակերպվել են պարտադրված վիճակին, և դա առավել քան ողբերգական է: Երբ հա-

---

[1] Ա.Ավագյան, «Կոստան Զարյան. Կյանքը և գործը», Ե, Երևանի պետ.համալսարանի տպարան, էջ 119:

[2] Կ.Զարեան, «Նաւը լերան վրայ», Բոստոն, 1943, տպ.Հայրենիք:

մեմատում ենք Մուրացկաններին և Ավելորդ մարդկանց, հետաքրքիր եզրակացության ենք գալիս. թեև բոլորովին այլ ժամանակաշրջան է ու այլ գաղափարախոսություն, բայց հասարակության վերաբերմունքը գիտության ու արվեստի մարդկանց (և ընդհանրապես մարդկանց) նկատմամբ նույնն է: Եթե հասարակության համար ավելորդ են արվեստագետն ու գիտնականը, արդյո՞ք տգետ, դատարկ, նյութամոլ ու նյութապաշտ, կեղծավոր չէ հասարակությունը: Եվ այդ հասարակությունն արարում էին բոլշևիկները:

Ավելորդ մարդկանց շարքում է ֆիզիկոս Արնուրը[1]: Հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է նրա մանկությունը, ուսումը, ընտանիքը, հայրենիքում հայտնվելը: Եվ հնարավոր չէ զուգահեռներ չտանել «Նաը լերան վրայ» վեպի Հերյանի, Միշա Թումանյանի, Բաբկեն Միրանյանի միջև: Արտասահմանում նրանք կայացել էին և՛ որպես անհատականություն, և՛ որպես մասնագետ, հարգված էին ու ապահովված կյանք ունեին: Բայց որպես իսկական հայրենասերներ՝ թողնում են ամեն ինչ և գալիս՝ հայրենիքի համար դժվար պահին ժողովրդի հետ լինելու և հայրենիքի կայացման համար պայքարելու: Սակայն պարզվում է, որ ծիծաղելի միամտություն է հոգով ու մարմնով հայրենիքի լուսավոր ապագայի կերտմանը նվիրվելու երազանքն ու պատրաստակամությունը, որովհետև կուսակցությունը պետք է որոշի, թե ով ինչպես և ինչքան է անհրաժեշտ հայրենիքին և ժողովրդին:

Կերտելով կուսակցական առաջնորդների, նրանց «ստվերների», ինչպես նաև հասարակ քաղաքացիների կերպարների մի ողջ պատկերասրահ՝ հեղինակը ցույց է տալիս մտածող, զգացող մարդկանց՝ պահանջված չլինելու, ավելորդ լինելու ողբերգությունը:

Կարծում ենք, որ Կոստան Զարյանը կարողացել է ճիշտ պատկերել խորհրդայնացող Հայաստանի բովանդակությունը և այն հասարակությունը, որը իր վրա էր կրում խորհրդայնացման ողջ ծանրությունը:

Բանալի բառեր. կերտել, բոլշևիկյան, լինելություն, գերխնդիր, ողբերգություն:

---

[1] Այս անունը հանդիպում է նաև Առնուր, Արնուռ տարբերակներով:

Ованисян Анна

Большевикская политика и человеческие судьбы в романе “Банкооп и кости мамонта”

Резюме

Статья о большевистской политике в первые годы советизации Армении и о влиянии этой политики на человеческие судьбы в романе Костана Заряна “Банкооп и кости мамонта”.

Ключевые слова - творить, большевистская, бытие, сверхзадача, трагедия

Hovhannisyan Anna

Bolsheviks’ Policy and Human Destinies in the Novel “Bansoop and the Bones of Mammot”

Summary

The article concerns the Bolsheviks’ policy during the first years of establishment of communist rule in Armenia and the impact of its policy on the people's destinies described in the novel "Bancoop and the Bones of Mammot" authored by Kostan Zarian.

Key words – create, bolshevik, existence, priority, tragedy